

**ԿՂԷՄԷՍ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ**

# **ՉԱՐԴԷ ՉԱՐԴ**

~

**6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1956Ի ԴԷՊՔԵՐԸ**

~

**ՊՈԼՍՈՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՇՈՒԿԱՆ  
ԵՒ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ**

**ՆԻՒ ԵՈՐՔ  
2000**

# ՉԱՐԴԷ ՉԱՐԴ

Ըստ ինքնուրույն թուղթիս, ծնած եմ 23 Մարտ 1916ին Թուրքիոյ այժմու մայրաքաղաք Անգարայի Գալէճիք գիւղը: Գիւղը Անգարայէն 70-80 քմ. հեռու հին Հռովմէական ժամանակէն մնացած բերդի մը շուրջ հիմնուած ըլլալով, անուանուած էր Գալէճիք (Բերդիկ). նոր անունն է՝ Սուլաքեուրդ: Մայրս կը պատմէր որ ծնունդէս քանի մը շաբաթ ետք զիս գրկած անցած է աքսորի ճամբաներէն, գիւղէ գիւղ, բոպիկ ոտքերը փուշերէն եւ խիճերէն ճաթուտած, ջարդուած հօրս վիշտը կուրծքին: Պահ մը, ծանր հիւանդութեանս (աղեթափ) պատճառով յուսահատած՝ զիս կը թողու ծառի մը տակ, որպէսզի գոնէ չտեսնէ իմ մահը:

Սակայն իմ մօր կարօտի կանչը կը խոցէ իր մօր սիրտը. ան լալազին կը գրկէ զիս եւ սեղմելով իր կուրծքին՝ կ'ըսէ. «Եթէ մեռնիլ կայ՝ միասին մեռնինք»:

Քիչ ետք, բարեբախտաբար, քրտական գիւղ մը կ'իջեւանինք: Ժողովուրդը հօրս ծանօթ ըլլալուն (հայրս իբրեւ կօշկակար անոնց կօշիկները կարած էր), յաճախորդներու կիները տեսնելով մօրս լալազին վիճակն ու զիս իր գիրկը՝ հիւանդ, կը հարցուփորձեն եւ կ'իմանան որ աղեթափութեան մատնուած եմ ու արիւն կը կորսնցնեմ:

«Անհոգ եղիր, կը բուժուի» ըսելով՝ ինծի ամէն օր ապուրի դգալ մը ռուպ (պեքմէզ) կը խմցնեն մեր հոն իջեւանած միջոցին. ռուպին շնորհիւ կ'պաքինիմ, մանաւանդ որ մօրս կաթը կտրուած էր այդ շրջանին: Խաղողը ճգմելով հիւթը կը հաւաքեն, կ'եփեն, եւ յառաջացած թանձր հիւթը, որ ռուպ կը կոչեն, սակաւարիւն մարդոց կը խմցնեն եղեր, որպէսզի անոնց արիւնը շատնայ եւ միեւնոյն ատեն մարմինը պահպանուի ցուրտի դէմ: Այս առաւելութեան համար, մինչեւ վերջին ատենները ցուրտ օրերուն երթեկուծեան հսկող ոստիկաններուն իբր տաքացուցիչ կու տային ռուպը Պոլսոյ մէջ:

Օրէնք կ'ելլէ թէ մահմետականութիւն ընդունողները կրնան վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը եւ տիրանալ իրենց ինչքերուն: Խուսափելու համար հետագայ բարդութիւններէ, Սօֆի հօրաքոյրս նախ կ'ըլլայ Սօֆու հանրմ, իսկ մայրս՝ Վարդուհին, կը դառնայ Կիւլիւնիա հանրմ: Այսպիսով ընտանիքի բոլոր ողջ մնացած անդամները հաւաքուելով կը վերադառնան Գալէճիքի մեր հօրենական տունը: Մօրս կաթէն զրկուած ըլլալուս, Օհաննէս հօրեղբօրս երիտասարդ կիներ, որ օժտուած էր Մինաս անունով երախայով մը, կը սկսի կաթ տալ ինծի ուրիշ հայուհիի մը հետ միասին, որուն անունը հիմա չեմ յիշեր: Այսպիսով, երեք մօրմէ կաթ ծծելով եմ մեծցած:

Շուտով կը սկսին նոր դժուարութիւններ: Թուրք երիտասարդները շարունակ կը փորձեն առեւանգել չափահաս դարձած քոյրերէս Արշալոյսն ու Մարիամը: Սօֆի հօրաքոյրս առնական քաջու-

Թեամբ կը պաշտպանէ բոլորս, ինչպէս առիւծ մը կը պաշտպանէ իր ձագերը միշտ բոյնին շուրջ շրջելով: Սօֆի հալան իբրեւ գէնք կը գործածէ տանիքին վրայ դիզած քարերը, մինչեւ որ անոնց տեղատարափին տակ փախչին առեւանգումի փորձ կատարողները: Ուրիշ ատեններ կտուրէ կտուր ցատկելով կը փախցնէ քոյրերս, եւ այսպէս կ'անցնին տարիներ:

Անտանելի վիճակէն այլեւս զգուած, Արշալոյսը կը նշանեն գինուոր Մելքոնին, իսկ Մարիամն ալ Արթինին, մանաւանդ որ մարդ չէր համարձակեր այլեւս մօտենալ գինուորականներու նշանածներուն: Երբ անոնք բանակային ծառայութենէ կը վերադառնան, անմիջապէս կ'ամուսնանան: Այսպիսով, երկու քոյրերս ալ կին կը դառնան թոյլ եւ անուս երիտասարդներու: Մայրս միշտ կ'ըսէր. «Հայրդ եթէ ողջ ըլլար, անոնց աղջիկ կուտար»:

Քիչ մը մեծցած էի, երբ մայրս օր մը գիս տարաւ չորս պատերու մէջտեղ, ձեղունը անհետացած, փլատակ եւ չորս բոլորը սեւցած տեղ մը, ուր կար խոշոր կաթսայ մը: Մինչեւ շապրնկեր մերկացայ եւ մտայ կաթսային մէջ: Մօրուքաւոր սեւազգեստ տիրադէմ անձ մը գլուխս շոյելով եւ թեթեւօրէն շփելով ջուր կը թափէր, մէկ կողմէ ալ իմ չհասկցած բառերով կը փսփսար բառեր: Ես այդ ժամանակ միայն թրքերէն գիտէի:

Երբ վերջին անգամ գլուխս շոյեց, երկարեց իր ձեռքը եւ ես գայն համբուրեցի: Արարողութիւնը լմնցած էր: Հագուստս հագած՝ գողերու պէս մեր շուրջը նայելով դուրս սպրդեցանք:

Մայրս ըսաւ թէ ծերուկը աքսորուած յոյն քա-

հանայ մըն էր, իսկ աւերուած չորս պատերը՝ հայոց այրած ու կողոպտուած եկեղեցին:

Թուրքերը նոյն վերաբերումը ցոյց տուած են հայկական բոլոր քաղաքներուն, գիւղաքաղաքներուն եւ գիւղերուն:

Արդէն եթէ թուրքին շինէ ըսես՝ չի կրնար բայց եթէ ըսես քանդէ՛, հիմնայատակ կ'ընէ. իր ձիրքը քանդելու, ամէն բան ջարդելու եւ կողոպտելու կը յարմարի: Մինչեւ Հունգարիա ու աւելի անդին, եւ մինչեւ Ափրիկէի ափերն ու արաբական երկիրներ, ջարդելով, քանդելով ու ամէն բան կողոպտելով տեղաւորուած բարբարոս ու քոչուոր ցեղ մը եղած են թուրքերը:

Երբ չափահաս էի, կը հարցնէի մօրս թէ հայրս, հօրեղբայրներս, գիւղին տղամարդիկը ինչո՞ւ զէնքով չէին փոխադարձած մի՞թէ զէնք չունէին: Եւ մայրս՝ Կիւլէնիան, կը պատասխանէր.

— Ա՛խ, գաւակս, պատէն կախուած լաւ որսի զէնքեր, կացիներ, դաշոյններ, ապա նաեւ ախոռը կապուած ընտիր ձիեր ու դիմադրութեան յարմար միջոցներ ունէին. բացի այդ՝ մե՛նք ալ կրնայինք օգնել իրենց. բայց... Նա՛խ անակնկալ կերպով հայոց տուները մտան եւ հաւաքեցին զէնքերը, դաշոյններն ու մինչեւ իսկ հացի դանակները: Յետոյ, այր մարդիկը գործի տեղերէն հաւաքեցին ու տարին: Հայրդ եւ երկու հօրեղբայրներդ միասին խանութէն առին տարին ու անգամ մըն ալ երեսնին չտեսանք: Ի՞նչ կրնային կամ կրնայինք ընել:

Մօրս արցունքները կը հոսէին գունատ այտերէն՝ երբ կը վերջիչէր այդ դժոխային ժամանակները,



*Չախին մայրս, իսկ աջին՝ հորաքույրս:*

մինչ ես կը գղջայի նման հարցումով իր վերքը կրկին բացած ըլլալու համար:

Գիւղին մէջ ասդին-անդին կը շրջէի. դպրոց չկար: Օր մը պատանիները խիտ ծառերով առուակի մը եզերքը տարին գիւ. հոն գորտ որսացին, տափատի նման սովեցին, ծառի կոճղի մը վրայ կրակ վառեցին և խորովելէ ետք ինծի ալ բաժին հանեցին սրունք մը, որ համով մը կերայ:

Օր մը թուրք սրիկայ մը դաշոյնը ձեռքին թու-նաւոր օձի նման դիմացս ցցուեցաւ: Նպատակը գէշ էր: Օգնութեան ճիչեր արձակելով սրընթաց կը վազէի: Յանկարծ երեսի վրայ ինկայ. ճակտիս տաք բան մը զգացի: Քարին զարնուած էի եւ գլուխս ճեղքած. արիւն էր որ կը հոսէր: Լուսահոգի Սօֆի հալան, որուն ականջները վարժ էին իր հարա-զատներու ձայնին, ձայնս լսելուն շտապած էր մօտս եւ թուրք լակոտը փախցուցած՝ պոռալով. «Ի՞նչ օղլու ի՞նչ (չան գաւակ), ի՞նչ կ'ուզէք փոքրիկ որբէն. ան արդէն վիրաւոր է. հիմա քարը գլխուդ կը փշրեմ»: Կապուած ճակատս շաբաթէ մը սպիացաւ եւ սպին մինչեւ այսօր վկայ է դէպքին:

Թուրքը անզնին դէմ հերոս է: Ան գիշատիչ գայլի էր նման, մինչ ես՝ գառնուկի: Բայց երբ առիւծը (Սօֆի հալան) մռնչեց, պոչը սրունքներուն մէջ առած փախուստ տուաւ գայլը:

Երբ քիչ մը աւելի մեծցած էի, անգամ մը մօրաքրոջս աղջկան՝ Թագուհիին հետ գիւ իբրեւ իրեն պահակ ղրկեցին գետեզերքը՝ լուացքի: Տափակ փայտէ շինուած տոփիչով (թոքաչ) լաթերը օճառելէ ետք, ձեռքերով կը ճմռթկէր զանոնք և յետոյ կը

զարնէր փայտին՝ մաքրելու համար: Վերջաւորութեան, ձեռքով կը քամէր ջուրերը եւ իրարու վրայ կը դիզէր լաթերը: Յանկարծ, առուակին ճախ կողմէն յայտնուեցաւ օձ մը, որ գորտ մը բերանն առած՝ կլլել կը ջանար: Թագուհին լաւ նշանառուի մը նման ձեռքի տոփիչով զարկաւ օձին մէջքին. գորտը խոյս տուաւ դէպի ջուրին յատակը, մինչ օձը գալարելով անհետացաւ հոսանքն ի վար:

Օսմանեան չարագործ Սուլթան Ապտիւլ Համիտն ու ապա Երիտթուրքերու կառավարութեան աւագանիէն էնվէր-Թալէաթ-Ճեմալ փաշաները ժողովուրդը գրգռելով մէկուկէս միլիոն հայեր իրենց ժանիքներուն մէջ առած կը ջարդէին: Ի տես այս գազանային տեսարանին, մեծ պետութիւններուն մէջ չգտնուեցաւ թագուհի մը, որ ելլէր եւ օձին մէջքին զարնելով փրկէր անմեղ ժողովուրդը մը: Ընդհակառակը, անոնք վերաբերեցան ճիշդ այնպէս, ինչպէս կ'ընէին հռովմայեցի կայսրերը՝ երբ ազատասէր գերիներ կը նետէին կատղած առիւծներու առջեւ կրկէսներու մէջ: Ամէն բան աւարտելէ ետք միայն պոռացին-կանչեցին, յետոյ ալ թուղթի վրայ կեղծ համաձայնութեամբ խաբեցին միամիտ հայութիւնը՝ մեր դարաւոր մայրենի նուիրական հողը իբրեւ վարձատրութիւն թուրքին նուիրելով:

Լոյսերու մէջ պառկին մայրս եւ հօրաքոյրս, որոնք մեծ Մինաս հօրեղբօրորդիիս երկու անգամ Գէսկին Մատէն աքսորի դրկուած, բայց 11 տարու ըլլալուն՝ Գէսկին Մատէնի թաղապետին կողմէ վերադարձուած ըլլալը տեսնելով, հակառակ անուս ըլլալուն, համոզուէր էին թէ կարելի չէր իրենց

ծննդավայրին մէջ ապրիլ եւ որոշեր էին դադարել Պոլիս՝ աւելի ապահով կեանք մը ունենալու համար:

Ամպամած, փոթորկոտ, ձիւնամրրկոտ օր մը ճամբայ ինկանք դէպի Պոլիս: Մըրիկը երբ հարուածէր՝ տեսողութիւնը կը խափանէր: Կառքը կ'ընթանար շատ դանդաղ: Յանկարծ կանգ առաւ անցեի մէջ էր խրած: Վար իջանք՝ թեթեւցնելու համար ձիւրուն բեռը: Կառապանը մտրակը ձեռքին մէկ կողմէ կը հարուածէր եւ միւս կողմէ կը շոյէր ձիւրը: Բայց ամէն ձիգ անօդուտ էր եւ ան՝ հակառակ ցուրտ օդին՝ թաշկինակ հանած քրտինք կը չորցնէր: Բարեբախտաբար վրայ հասաւ նոյն գիւղէն դադարող ուրիշ կառք մը, որուն ձիւրն ալ մեր կառքին կապելով՝ կառապանը վերջապէս յաջողեցաւ մեր կառքը ճամբայ հանել:

Անվերարկու՝ կը մտէի անկիւն մը կծկտած: Դա՛րձեալ Սօֆի հալան հասաւ օգնութեան: Իր կռնակի շալով ծածկեց զիս: Իր սրտահատոր երիտասարդ եղբայրները կորսնցուցած ըլլալով, սիրտը խոցուած էր եւ երբեք չէր ուզեր որ վնաս հասնէր անոնց նուիրական յիշատակին ու կը դողդղար մեր վրայ որ չհիւանդանանք, հոգ չէ թէ ի՛նք մսի: Ան կը խորհէր թէ իրեն բան չի պատահիր, եւ իրապէ՛ս ալ բան չէր պատահեր: Կարծէք հրեշտակները կը պահպանէին զինք:

Բաւական արկածներէ ետք հասանք Անգարա, մեծ Մինաս հօրեղբօրորդիիս տունը: Ամուսնացած էր ան Մեմգորին հետ, որ միջահասակ, թուխ, բարեսիրտ, խնդումներես տանտիկին մըն էր: Բոլորը զիս համբուրեցին. հանգչեցանք: